ՀՀ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶ
Արտիմետի
գյուղապետարան

РЕСПУБЛИКА АРМЕНИЯ
Армавирский марз
община с. Артимет

057 կոդ 04704111

N 62

_04 նոյեմբերի 2013 թ.

Հասցե Արմավիրի
մարզ
գյուղ Արտիմետ
Հեռ. 4 - 76 - 01

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶՊԵՏ

ՊԱՐՈՆ Ա. ՂԱՀՐԱՄԱՆՅԱՆԻՆ

ՀԱՐԳԱՐԺԱՆ ՄԱՐԶՊԵՏ

Հայտնում ենք Ձեզ, որ Արմավիրի մարզի Արտիմետ համայնքում 2013 թվականի հոկտեմբեր ամսին ընդունվել է համայնքի ղեկավարի հինգ որոշում իսկ կարգադրություն չի արձակվել :

Առդիր 13 թերթ:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Ձ. Միրզախանյան

ՀՀ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶՊԵՏԱՐԱՆ
Մուտք N 12.32/0402-13
«08» 11 2013

## Հ Հ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ
## Արտիմետ համայնքի ղեկավարի
# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

N -----10-------

Հասցե. Արմավիրի մարզ
գյուղ Արտիմետ
Հեռ. 4-76-01

«----02----» հոկտեմբերի 2013 Թ.

ԲՆԱԿԵԼԻ ՏԱՆ ԵՎ ԲՆԱԿԵԼԻ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ՕԺԱՆԴԱԿ ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՆԿԱՏՄԱՄԲ ԳՈՒՅՔԱՅԻՆ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ՎԵՐԱԿԱՆԳՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ.

Արմավիրի մարզի Արտիմետ համայնքի բնակիչ Յուրիկ Օհանի Միրզախանյանը ( ծնված 20.02.1954թ. ), դիմել է Արմավիրի մարզի, Արտիմետ համայնքի Չարենց 5 հասցեում գտնվող իրեն պատկանող / ըստ իր ժառանգության իրավունքի վկայագրերի տրված 27.09.2013թ. ս/մ 5357 / 0.2143 հա օրինական հողամասի վրա կառուցված բնակելի տան և բնակելի նշանակության օժանդակ շենք – շինությունների նկատմամբիրավունքները վերականգնելու խնդրանքով:

*Հաշվի առնելով , որ բնակելի տունը և շենք շինությունները կառուցվել են մինչև 15.05.2001թ. , հողամասը ընդգրկված չէ հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով նախատեսված սահմանափակումների ցանկում, <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի հոդվածի 1-ին մասի 17-րդ կետով,* <<Հայաստանի Հանրապետության համայնքների վարչական տարածքներում իրավունք հաստատող փաստաթղթերը չպահպանված անհատական բնակելի տների կարգավիճակի մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքով.

## Ո Ր Ո Շ Ո Ւ Մ Ե Մ

1. Վերականգնել Արմավիրի մարզի Արտիմետ համայնքի, Չարենցի 5 հասցեում գտնվող գույքային միավորների նկատմամբ քաղաքացի Յուրիկ Օհանի Միրզախանյանի / ծնված 20.02.1954թ. / գույքային միավորները՝ ճանաչելով նրա սեփականության իրավունքը օրինական 0.2143 հա հողամասի վրա կառուցված բնակելի տանն բնակելի նշանակության օժանդակ շենք – շինությունների նկատմամբ /բնակելի տուն՝ 80.0 քմ կառուցված 1957թ. , բնակելի տուն՝ 8,7 քմ. , կառուցված 1965թ. , ծածկոց՝ 18.0 քմ կառուցված 1970 թ. , մառան՝ 22.4 քմ. , կառուցված 1970թ. թոնրատուն՝ 20.3 քմ. կառուցված 1970 թ., անասնաշենք՝ 15.1 քմ. կառուցված 1970թ. ավտոտնակ՝ 27.3 քմ կառուցված 1970թ. , ծածկած մուտք՝ 49.5 քմ կառուցված 1970թ./:

Բնակելի տունը և բնակելի նշանակության օժանդակ շենք – շինությունները բավարարում են <<Հայաստանի Հանրապետության համայնքների վարչական տարածքներում իրավունք հաստատող փաստաթղթերը չպահպանված անհատական բնակելի տների կարգավիճակի մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 1 և 2 հոդվածների պահանջները: Հողամասը չի ընդգրկված Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով նախատեսնված հողերի ցանկում: կառույցները չեն հակասում քաղաքաշինական նորմերի , չեն առաջացնում սերվիտուտ:

2. Շենք – շինությունների մակերեսները ենթակա են ճշտման համապատասխան որակավորում ստացած անձի կողմից:
3. Առաջարկել Հայաստանի Հանրապետության ԿԱ ԱԳԿՊԿ համապատասխան մարզային ստորաբաժանմանը գրանցել Յուրիկ Օհանի Միրզախանյանի / ծնված 20.02.1954թ. / սեփականության իրավունքը սույն որոշման 1-ին կետում նշված հողամասի և այդ հողամասում առկա բնակելի տան նկատմամբ և տրամադրել անշարժ գույքի սեփականության իրավունքի գրանցման վկայական :
4. Տալ Չարենց թիվ 5 հասցեն:
5. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

Համայնքի ղեկավար Զ. ՄԻՐԶԱԽԱՆՅԱՆ

## Հ Հ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ
## Արտիմետ համայնքի ղեկավարի
# Ո Ր Ո Շ Ու Մ

N -----11-------

Հասցե. Արմավիրի մարզ
գյուղ Արտիմետ
Հեռ. 4-76-01

«----02----» հոկտեմբերի 2013 Թ.

### ԲՆԱԿԵԼԻ ՏԱՆ ԵՎ ԲՆԱԿԵԼԻ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ՕԺԱՆԴԱԿ ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՆԿԱՏՄԱՄԲ ԳՈՒՅՔԱՅԻՆ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ՎԵՐԱԿԱՆԳՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ.

Արմավիրի մարզի Արտիմետ համայնքի բնակիչներ Վոլոդիա Վասիլի Բաբայանը ( ծնված 01.10.1955թ. ), Վալերիկ Վասիլի Բաբայանը (ծնված 27.11.1952թ.) դիմել են Արմավիրի մարզ, գ. Արտիմետ Գայի փողոց թիվ 37 հասցեում գտնվող բնակավայրի , ըստ իրենց ժառանգության իրավունքի վկայագրերի տրված 21.10.2008թ. ս/մ 5734 օրինական 1420.0քմ հողամասին կից 12.0քմ ինքնակամ զբաղեցրած հողամասի վրա կառուցված բնակելի տունը և շենք – շինությունները օրինականացնելու խնդրանքով, որը օրենքի ուժով կարող է փոխանցվել անհատույց սեփականության իրավունքով:

Հաշվի առնելով , որ կառույցը իրականացվել է մինչև 15.05.2001թ. , հողամասը ընդգրկված չէ հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով նախատեսված սահմանափակումների ցանկում, ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 64-րդ հոդվածի 8-րդ կետով, <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի հոդվածի 1-ին մասի 17-րդ կետով, <<Հայաստանի Հանրապետության համայնքների վարչական տարածքներում իրավունք հաստատող փաստաթղթերը չպահպանված անհատական բնակելի տների կարգավիճակի մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքով.

Ո Ր Ո Շ ՈՒ Մ  Ե Մ

1. Վերականգնել Արմավիրի մարզի Արտիմետ համայնքի, Գայի փողոց թիվ 37 հասցեում գտնվող գույքային միավորների նկատմամբ քաղաքացիներ Վոլոդիա Վասիլի Բաբայանը / ծնված 01.10.1955թ. / Վալերիկ Վասիլի Բաբայանը / ծնված 27.11.1952թ./ գույքային իրավունքները՝ ճանաչելով նրա սեփականության իրավունքը 1420.0քմ օրինական հողամասին կից 12.0 քմ ինքնակամ զբաղեցրած հողամասի և օրինական հողամասի վրա գտնվող բնակելի տան և շենք – շինությունների նկատմամբ:

Բնակելի տունը և բնակելի նշանակության օժանդակ շենք – շինությունները բավարարում են <<Հայաստանի Հանրապետության համայնքների վարչական տարածքներում իրավունք հաստատող փաստաթղթերը չպահպանված անհատական

բնակելի տների կարգավիճակի մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 1 և 2 հոդվածների պահանջները:

Հողամասը չի ընդգրկված Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով նախատեսված հողերի ցանկում: կառույցները չեն հակասում քաղաքաշինական նորմերի , չեն առաջացնում սերվիտուտ:

2. Ինքնակամ կառույցի օրինականացման համար վճար չի սահմանվում:
3. Շենք – շինությունների մակերեսները ենթակա են ճշտման համապատասխան որոկավորում ստացած անձի կողմից:
4. Առաջարկել Հայաստանի Հանրապետության ԿԱ ԱԳԿՊԿ համապատասխան մարզային ստորաբաժանմանը գրանցել քաղաքացիներ Վոլոդիա Վասիլի Բաբայանը / ծնված 01.10.1955թ. / Վալերիկ Վասիլի Բաբայանը / ծնված 27.11.1952 թ. / սեփականության իրավունքը սույն որոշման 1-ին կետում նշված հողամասի և այդ հողամասում առկա բնակելի տան նկատմամբ և տրամադրել անշարժ գույքի սեփականության իրավունքի գրանցման վկայական :
5. 0046-0002 ծածկագրին տալ Գայի թիվ 37 հասցեն:
6. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

Համայնքի ղեկավար Ջ. ՄԻՐԶԱԽԱՆՅԱՆ

## Հ Հ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ
## Արտիմետ համայնքի ղեկավարի
# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

N -----12-------

Հասցե. Արմավիրի մարզ
գյուղ Արտիմետ
Հեռ. 4-76-01

«----14----» հոկտեմբերի 2013 Թ.

ԻՆՔՆԱԿԱՄ ԿԱՌՈՒՑՎԱԾ ԲՆԱԿԵԼԻ ՏԱՆ ԵՎ ՇԵՆՔ - ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՆԿԱՏՄԱՄԲ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ՎԵՐԱԿԱՆԳՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ.

Արմավիրի մարզի , Արտիմետ գյուղի բնակիչներ Մոնա Արայիկի Հարությունյանը /ծնված 13.12.1987թ./ , Թագուհի Արայիկի Հարությունյանը /ծնված02.08.1986թ./ դիմել են Արմավիրի մարզ, գ. Արտիմետ, Չարենց թիվ 78 / 1 հասցեում գտնվող բնակավայրի , տնամերձ ինքնակամ զբաղեցրած 1000.0քմ հողամասի և նշված հողամասի վրա ինքնակամ կառուցված բնակելի տունը և շենք - շինությունները օրինականացնելու խնդրանքով, որը օրենքի ուժով կարող է փոխանցվել անհատույց սեփականության իրավունքով:

Հաշվի առնելով, որ կառույցը իրականացվել է մինչև 15.05.2001թ., հողամասը համապատասխանում է Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 64-րդ հոդվածի 2-րդ կետի 1 , 2 , 3 ենթակետերով սահմանված պահանջներին և ընդգրկված չէ նույն օրենսգրքի 60-րդ հոդվածով նախատեսված սահմանափակումների ցանկում, ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 64-րդ հոդվածի 8-րդ կետով, <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի հոդվածի 1-ին մասի 17-րդ կետով, << Հայաստանի Հանրապետության համայնքների վարչական տարածքներում իրավունք հաստատող փաստաթղթերը չպահպանված անհատական բնակելի տների կարգավիճակի մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքով.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ   Ե Մ

1. Վերականգնել Արմավիրի մարզ, գ. Արտիմետ, չարենցի թիվ 78 / 1 հասցեում գտնվող գույքային միավորների նկատմամբ քաղաքացիներ Մոնա Արայիկի Հարությունյանը / ծնված 13.12.1987թ./ , Թագուհի Արայիկի Հարությունյանը /ծնված 02.08.1986թ./ գույքային իրավունքները՝ ճանաչելով նրանց սեփականության իրավունքը 1000.0քմ հողամասի և նշված հողամասի վրա գտնվող բնակելի տան և շենք – շինությունների նկատմամբ:

Բնակելի նշանակության օժանդակ շենք – շինությունները բավարարում են <<Հայաստանի Հանրապետության համայնքների վարչական տարածքներում իրավունք հաստատող փաստաթղթերը չպահպանված անհատական բնակելի տների կարգավիճակի մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 1 և 2 հոդվածների պահանջները: Հողամասը չի ընդգրկված Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով նախատեսնված հողերի ցանկում: կառույցները չեն հակասում քաղաքաշինական նորմերի , չեն առաջացնում սերվիտուտ:

2. Շենք – շինությունների մակերեսները ենթակա են ճշտման համապատասխան որոկավորում ստացած անձի կողմից:

3.Առաջարկել Հայաստանի Հանրապետության ԿԱ ԱԳԿՊԿ համապատասխան մարզային ստորաբաժանմանը գրանցել Սոնա Արայիկի Հարությունյանի / ծնված 13.12.1987թ. / Թագուհի Արայիկի Հարությունյանի / ծնված 02.08.1986 թ. / սեփականության իրավունքը սույն որոշման 1-ին կետում նշված հողամասի և այդ հողամասում առկա բնակելի տան նկատմամբ և տրամադրել անշարժ գույքի սեփականության իրավունքի գրանցման վկայական :

4. Տալ բնակելի տանը Չարենց փողոցի թիվ 78 / 1 հասցեն:

5. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

Համայնքի ղեկավար Զ. ՄԻՐԶԱԽԱՆՅԱՆ

## Հ Հ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ
## Արտիմետ համայնքի ղեկավարի
# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

N -----13-------

«----24----» հոկտեմբերի 2013 թ.

Հասցե. Արմավիրի մարզ
գյուղ Արտիմետ
Հեռ. 4-76-01

ԲՆԱԿԵԼԻ ՏԱՆ ԵՎ ԲՆԱԿԵԼԻ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ՕԺԱՆԴԱԿ ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՆԿԱՏՄԱՄԲ ԳՈՒՅՔԱՅԻՆ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ՎԵՐԱԿԱՆԳՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ.

Արմավիրի մարզի Արտիմետ համայնքի բնակիչ Աշոտ Հարությունյանը /ծնված 22.01.1964թ. / դիմել է Արմավիրի մարզի, Արտիմետ համայնքի Աբովյան փողոցի թիվ 16/1 հասցեում գտնվող, իրեն պատկանող օրինական 0.0563 հա հողամասի վրա կառուցված բնակելի տան և բնակելի նշանակության օժանդակ շենք – շինությունների նկատմամբ իրավունքները վերականգնելու խնդրանքով:

Հաշվի առնելով, որ կառույցը իրականացվել է մինչև 15.05.2001թ., հողամասը համապատասխանում է Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 64-րդ հոդվածի 2-րդ կետի 1 , 2 , 3 ենթակետերով սահմանված պահանջներին և ընդգրկված չէ նույն օրենսգրքի 60-րդ հոդվածով նախատեսված սահմանափակումների ցանկում, ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 64-րդ հոդվածի 8-րդ կետով, <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի հոդվածի 1-ին մասի 17-րդ կետով, << Հայաստանի Հանրապետության համայնքների վարչական տարածքներում իրավունք հաստատող փաստաթղթերը չպահպանված անհատական բնակելի տների կարգավիճակի մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքով.

## Ո Ր Ո Շ Ո Ւ Մ   Ե Մ

1. Վերականգնել Արմավիրի մարզի. Արտիմետ համայնքի Աբովյան փողոց թիվ 16/1 հասցեում գտնվող գույքային միավորների նկատմամբ քաղաքացի Աշոտ Հարությունյանի / ծնված 22.01.1964թ. / գույքային իրավունքները՝ ճանաչելով նրա սեփականության իրավունքը օրինական 0.0563 հա հողամասի վրա կառուցված բնակելի տան և բնակելի նշանակության օժանդակ շենք-շինությունների նկատմամբ:

Բնակելի նշանակության օժանդակ շենք – շինությունները բավարարում են <<Հայաստանի Հանրապետության համայնքների վարչական տարածքներում իրավունք հաստատող փաստաթղթերը չպահպանված անհատական բնակելի տների կարգավիճակի մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 1 և 2 հոդվածների պահանջները: Հողամասը չի ընդգրկված Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով նախատեսնված հողերի ցանկում: կառույցները չեն հակասում քաղաքաշինական նորմերի , չեն առաջացնում սերվիտուտ:

2. Շենք – շինությունների մակերեսները ենթակա են ճշտման համապատասխան որոկավորում ստացած անձի կողմից:

3.Առաջարկել Հայաստանի Հանրապետության ԿԱ ԱԳԿՊԿ համապատասխան մարզային ստորաբաժանմանը գրանցել Աշոտ Հարությունյանի սեփականության իրավունքը սույն որոշման 1-ին կետում նշված հողամասի և այդ հողամասում առկա բնակելի տան նկատմամբ և տրամադրել անշարժ գույքի սեփականության իրավունքի գրանցման վկայական :

4. 00027 – 0021 ծածկագրին տալ Աբովյան փողոցի թիվ 16/ 1 հասցեն:

5.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

Համայնքի ղեկավար Ձ. ՄԻՐԶԱԽԱՆՅԱՆ

## Հ Հ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ
## Արտիմետ համայնքի ղեկավարի
# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

N -----14-------

«----29----» նոյեմբերի 2013 Թ.

Հասցե. Արմավիրի մարզ
գյուղ Արտիմետ
Հեռ. 4-76-01

## ԱՐՏԻՄԵՏ ՀԱՄԱՅՆՔՈՒՄ ԲՆԱԿՉՈՒԹՅԱՆ ՏԱՐԱՀԱՆՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ ՍՏԵՂԾԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ի կատարումն Հայաստանի Հանրապետության 2011 թվականի օգոստոսի 18-ի «Վտանգավոր տարածքից բնակչության տարահանման կարգը հաստատելու մասին» թիվ 1180-Ն որոշման, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետի 02.07.2013թվականի N 285 որոշման 4-րդ կետը, արտակարգ իրավիճակների ռազմական դրության ժամանակ նախապես բնակչության, նյութական և մշակութային արժեքներ տարահանման պլանավորման , նախապատրաստման և անցկացման ապահովման նպատակով.

### Ո Ր Ո Շ Ո Ւ Մ Ե Մ՝

1.Ստեղծել Արտիմետ համայնքի բնակչության տարահանման հանձնաժողով՝ /համաձայն հավելված 1-ի /:

2. Արտիմետ համայնքի տարահանման հանձնաժողովի կազմում ստեղծել աշխատանքային խմբեր՝ /համաձայն հավելված 2-ի /:

3. Հաստատել տարահանման հանձնաժողովի կանոնադրությունը /համաձայն հավելված 3- ի/:

4. Ստեղծել տարահանման հավաքակայան Չարենցի փողոցի թիվ 45 հասցեի դպրոցի շենքում:

5.Տարահանման հավաքակայանի պետ նշանակել դպրոցի տնօրեն Ա. Գյոզալյանին:

6. Տարահանման հավաքակայանի պետ Ա. Գյոզալյանին՝

- որոշել տարահանման հավաքակայանի կառուցվածքը և կազմը, մշակել ՏՀԿ /ԸՀԿ/ կառուցվածքային մարմինների գործառնական պարտականությունները և ներկայացնել հաստատման տասնօրյա ժամկետում:

7. Առաջարկել համայնքի տարածքում գործող կազմակերպությունների ղեկավարներին՝ ստեղծել օբյեկտային տարահանման հանձնաժողովներ:

8. Ուժը կորցրած ճանաչել համայնքապետի «Արմավիրի մարզի Արտիմետ համայնքում բնակչության տարահանման հանձնաժողով ստեղծելու մասին» 2012 թվականի թիվ 7 որոշումը:

9. Սույն որոշման կատարման կազմակերպումն ու պատասխանատվությունը դնել համայնքի տարահանման հանձնաժողովի նախագահ Մ. Սահակյանի վրա:

Հ Ա Մ Ա Յ Ն Ք Ի ... Զ. ՄԻՐԶԱԽԱՆՅԱՆ

ՀԱՎԵԼՎԱԾ 1
ՀՀ Արմավիրի մարզի
Արտիմետի համայնքապետի ,,29,, հոկտեմբերի 2013թ.
թիվ 14 որոշման

## ԱՐՏԻՄԵՏ ՀԱՄԱՅՆՔԻ ԲՆԱԿՉՈՒԹՅԱՆ ՏԱՐՀԱՆՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ԿԱԶՄԸ

Մանվել Սահակյան — Հանձնաժողովի նախագահ՝ համայնքապետի տեղակալ /պաշտոնը/.

Մանվել Հակոբյան — Հանձնաժողովի նախագահի տեղակալ առաջատար մասնագետ /պաշտոնը/

Գայանե Մովսիսյան — Հանձնաժողովի քարտուղար՝ աշխատակազմի քարտուղար /պաշտոնը/

Հանձնաժողովի անդամներ, աշխատանքային խմբերի ղեկավարներ՝

Անահիտ Համբարձումյան - օպերատոր
Գագիկ Միրզախանյան - ավազանու անդամ
Անահիտ Հովհաննիսյան - հաշվապահ
Նվարդ Վարդանյան - ուսուցչուհի

Աշխատակազմի ղեկ Գ. Մովսիսյան

ՀԱՎԵԼՎԱԾ 2
ՀՀ Արմավիրի մարզի Արտիմետի
համայնքապետի „29„ հոկտեմբերի 2013թ.
թիվ 14 որոշման

## ԱՐՏԻՄԵՏ ՀԱՄԱՅՆՔԻ ԲՆԱԿՉՈՒԹՅԱՆ ՏԱՐՀԱՆՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ԽՄԲԵՐԸ

1.Վտանգավոր տարածքից բնակչության դուրս բերման հաշվառման խումբ.

Խմբի ղեկավար
Նվարդ Վարդանյան - ուսուցչուհի
Խմբի անդամներ
Արտակ Ռուշանյան - ավագանու անդամ
Նելսոն Մեղրակյան - ավագանու անդամ

2.Անվտանգ գոտում բնակչության տեղաբաշխման հաշվառման խումբ.

Խմբի ղեկավար
Անահիտ Համբարձումյան - օպերատոր
Խմբի անդամներ
Արսեն Ղազարյան - ավագանու անդամ
Սերյոժա Հովհաննիսյան - ավագանու անդամ

3.Տրանսպորտային ապահովման խումբ.

Խմբի ղեկավար
Գագիկ Միրզախանյա - ավագանու անդամ
Խմբի անդամներ
Մկրտիչ Բաղդասարյան - ուսուցիչ
Տիգրան Միրզախանյան - վարորդ

4.Սննդամթերքի և նյութական արժեքների պաշարների հաշվառման խումբ.

Խմբի ղեկավար
Անահիտ Հովհաննիսյան - հաշվապահ
Խմբի անդամներ
Լիլիկ Հակոբյան - բուժքույր
Սիրանուշ Մկրտչյան - բուժքույր

Աշխատակազմի ղեկավար Գ. Մովսիսյան